

ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՈՒ ԶԱՅ ՄԻԱՐԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՖՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. Ավետիս Օգոստին Կարենցի

Հայագիտության մեջ XIV դ. դոմինիկյան այս հայ հեղինակին վերաբերող գրականությունը մեծ չէ. երկու անգամ նրա մասին հպանցիկ խոսել է Ղ. Ալիշանը, մի փոքրիկ հոդվածում Ն. Ակինյանը բերել է Ավետիսին վերաբերող իրեն հայտնի երեք տեղեկություն և շեշտել, որ նրան չպետք է շփոթել XVI—XVII դդ. գործիչ Օգոստինոս Բաշենցի հետ¹։ Երրորդ և վերջին բանասերը, որ երկիցս ի մի է բերել Ավետիսին առնչվող տեղեկությունները և կազմել նրա երկերի համեստ ցանկը, Մ. Ա. Ուդենրիյն է։ Ի վերջո, ամփոփելով հիմնականում վերջինիս ուսումնասիրության արդյունքները, Հ. Անասյանը ներկայացրել է Ավետիսի շորս երկի և նրան վերաբերող գրականության մատենագիտությունը²։

Իհնե Ն. Ակինյանը և Հ. Անասյանը ծանոթ են եղել Ավետիսի հայր Մարուգեի 1342 թ. Կաբինում ընդօրինակած և հետագայում որդուն ժառանգած ձեռագիր Աստվածաշնչի նկարագրությանը³, որտեղ տպագրված հիշատակարաններն ու ժամանակագրական գրանցումները պարզ պատկերացում են տալիս այդ կաթոլիկացած ընտանիքի ճակատագրի մասին, բայց ըստ արժանվույն չեն ներկայացրել այս արժեքավոր աղբյուրը։ Քանի որ այն ուշագրավ է իր հնությունը և օրացուցային ճշգրտությամբ, նաև՝ բավական արժեքավոր XIV դ. հիշատակարանների ու այլ վավերագրերի հաղորդած ամսաթվերի վավերականության ստուգման համար, ուստի համառոտ ներկայացնում ենք նրա բովանդակությունը⁴։

Կարենցի Ավետիս և Աննախաթուն ծնողների զավակ Մարուգեն ծնվել է 1311 թ. ահեկան ամսվա 12-ի շաբաթ օրը, ամուսնացել՝ 1327 թ. մարերի ամսի 18-ի հինգշաբթի օրը, քահանա ձեռնադրվել՝ 1329 թ. հրոտից ամսի կիրա-

1 Գույե յոզպիսի շփոթման արդյունքով է Ավետիս Օգոստինը համարվել «ԺՋ դ. տաղերգու» («Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», կազմեցին Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, հ. Ա. Երևան, 1965, էջ 1459, հ. Բ, Երևան, 1970, էջ 1271 (այսուհետև՝ ՑՁՄՄ)։

2 Մանրամասն տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ զգ., հ. Բ, Երևան, 1976, էջ 1023—1026։ Ի տարբերություն հիշված բանասերների օգտագործած «Ավետիք» ձևի, մենք նախընտրում ենք «Ավետիս» տարբերակը, որը վկայված է ինքնագիր և ժամանակակից աղբյուրներում։

3 Ցուցակ հայերեն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի և Ս. Դանիէլի ի Կեսարիա, կազմեց՝ Տրդատ Է. Պալյան, Վիեննա, 1963, էջ 1—6 (այսուհետև՝ Պալյան), հմմտ. «Հանգես ամսօրյա», 1948, էջ 587 և Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 1023—1024։

4 Պալյան, էջ 4—6։

ևի օրը: 1332 թ. մարտի 12-ի (սահմի 23-ի) ուրբաթ օրը ծնվել է նրա անդրանիկ որդին և ի պատիվ պապի ստացել Ավետիս անունը: Այս վերջին հանգամանքով էլ, հավանաբար, պետք է բացատրել թո՛ղ Ավետիսի զույգ անուն ունենալը՝ կաթոլիկ քահանայի աստիճան և Օգոստինոս անունը ստանալուց հետո ևս իր պապի անունը կրելը: 1345 թ. փետրվարի 6-ի⁵ շաբաթ օրը մահացել է Ավետիսի մայրը՝ Գոհարիսթունը: Երևի 1345—1348 թթ. ընթացքում ընտանիքը տեղափոխվել է Կաֆա, ուր և 1348 թ. ժանտախտի համաճարակից ղեկտեմբերի 17-ին մահացել են Ավետիսի 11 տարեկան եղբայրը՝ Ներսեսը (մի այլ տեղում՝ Աոսթենես⁶) և 8 տարեկան քույրը՝ Աննան:

1348 թ. սեպտեմբերի 19-ի շաբաթ օրը, երբ հայտնի միաբար Թադեոս Կաֆայեցի եպիսկոպոսը գնացել էր Ավինյոն, նրա փոխանորդ (վիքար) Ֆրա Ռոստոմի հրամանով Ստեփաննոս Մալազ եպիսկոպոսը Կաֆայի Ս. Ֆրանցիսկոս եկեղեցում Մարուգեին ձեռնադրել է «նոր երէց»՝ կաթոլիկ քահանա: Իսկ 1356 թ. հունիսի 18-ի շաբաթ օրը հիշյալ Թադեոս Կաֆայեցին քահանայության աստիճան է տվել Ավետիսին, որը 1363 թ. մարտի 13-ի (սահմի 23-ի) երկուշաբթի օրը ընդունվել է դոմինիկյան (քարոզողների) միաբանություն: 1366 թ. հունվարի 1-ին Մարուգեն մահացել է 55 տարեկան հասակում:

Տարեգրության մեջ կան նաև այլ տեղեկություններ, որոնք պատմում են հաջի Թադայի հեծելազորի կողմից 1342 թ. Կարին քաղաքի և գավառի ավերման, 1348 և 1361 թթ. ժանտախտի համաճարակների, 1351 թ. հուլիսի 28-ին Թադեոս Կաֆայեցու կողմից Կաֆայի Միքայել Հրեշտակապետ եկեղեցու հիմնարկության մասին և այլն:

Գրանցումների մեջ նկատելի է մի կարևոր հանգամանք. սկզբում, հռոմեականին զուգահեռ, նշանակվում են նաև հայկական թվականները, ամսանունները և ամսաթվերը, ապա առաջինները գերիշխում են, իսկ վերջինները երևում են դեպից դեպ: Կարծում ենք, որ դա կապված է բուն հայկական միջավայրից ընտանիքի աստիճանաբար աճող օտարացման հետ:

Մնում է ավելացնել Ավետիսի կենսագրության այլ աղբյուրներից հայտնի թվականները. 1358 թ. հունվարին նա Պիզայի Վ. Անտոնոս անվամբ «Հայոց տանն» էր⁷, 1374 թ. հունվարին՝ Բերայի (Կ. Պոլիս) դոմինիկյան եկեղեցում⁸, իսկ 1380—1383 թթ.⁹ նույն միաբանության Վենետիկի Ս. Հովհաննես և Ս. Պողոս եկեղեցում: Նրա հետագա ճակատագրի մասին մեզ հայտնի որևէ աղբյուրում հիշատակություն չկա: Ենթադրելի է, որ մահացել է XIV—XV դդ. սահմանագծում՝ Եվրոպայում կամ Կաֆայում:

Ավետիսի ընտանեկան տարեգրության շնորհիվ շտկվում են հատկապես Մ. Ուղենրիյնի որոշ թեափան բնորոշումներ և թվագրումներ, բայց դրանք

⁵ Հայոց ԶԳԴ (1345) թվականին զուգահեռ բերված քրիստոնեական թվականի ՌՅԼԽ (1330 և 40) անիմաստ ձևը պետք է համարել տպագրական վրիպակ և սրբագրել՝ ՌՅԽԵ (1345), հմմտ. Պ ա լ յ ա ն, էջ 4:

⁶ Նույն տեղում, էջ 6:

⁷ Ցե'ս M. A. v. d. Oudenrijn, Linguae Halcanae Scriptores ordinis Praedicatorum congregationis fratrum Unitorum..., Bernae, 1960, p. 264—265 (այսուհետև՝ LHS):

⁸ Նույն տեղում, էջ 294:

⁹ Հ. Ա ն ա ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 1023—1024. հմմտ. LHS, p. 294 և M. A. v. d. Oudenrijn, Der Armenische Dominikaner Fr. Avetiq Augustin von Erzerum («Հանդես ամսօրյա», 1948, էջ 595—596):

այստեղ չենք քննում, քանի որ ավելի ուշագրավ է Մ. Ուդենրիյնի այն հաղորդումը, թե, ինչպես ասված է Վենետիկի Ս. Ղազարի № 1578 ձեռագրում, այդ դրշադիրը Ավետիսի ձեռքով լրացվել է 1381 թ.¹⁰։ Ձեռագիրը Մարտինոս Օպավիացու ժամանակագրության Ներսես Պալիանցի թարգմանության (1348—1351) ինքնագիրն է։ Մեր ձեռքին գտնվող մանրաժապավենի¹¹ շնորհիվ կարող ենք ասել, որ Մ. Ուդենրիյնի վերոբերյալ հաղորդման աղբյուրը ձեռագրի սկզբում ավելացված և ընդհանուր էջակալման շենթարկված թերթի երկրորդ երեսին Ղ. Ալիշանի ձեռքով կատարված հետևյալ գրանցումն է։ «Իսկագիր նախագաղափար թարգմանություն է Ներսիսի Պալիանց այս մատյանիսկ ժամանակագրությունը Հեթմո և Հրաշալյաց բանք, որ ի հուսկ վերջին է դո, և այլ ինչ բանք, գրյալ են ի Ֆր. Ավգոստինոսե Արզրումցո դոմինիկյան կրոնավորե, ի 1381։ Տե՛ս զհետևույս ինքնագիր գրչություն Հառաջաբանությունց Սուրբ Գրոց»¹²։

Ղ. Ալիշանի «Հրաշալեաց բանք» բնորոշած փոքր բնագիրը Մարտինոսի երկի թարգմանության անկապտելի մասն է, «Ժամանակագրություն Հեթմոյն»՝ Հեթմո Կոռնիկոսցուն վերագրված և իրավացիորեն Հեթմո II թագավորի անունով հրատարակված «Տարեգրությունը»¹³։ Այս դեպքերում Ավետիսը կատարել է ընդամենն ընդօրինակող գրչի դեր։ Իսկ «այլ ինչ բանք» և «Յառաջաբանությունը Սուրբ Գրոց» կոչված բնագրերի առումով նա հանդես է գալիս արդեն որպես հեղինակ։ Ուստի, լրացնելով «Հայկական մատենագիտության» «Ավետիք Օգոստինոս Կարնեցի» բառահոգվածը, ներկայացնում ենք Ավետիսի նորահայտ փոքրածավալ երկերը։

1. [Աւետարանիչ և Աւետարան]—Մաթէոս մարդ վասն այն ցուցալ...¹⁴։

Ղ. Ալիշանի բնորոշմամբ սա «Յառաջաբանությունը Սուրբ Գրոց» է, բայց այդ խորագիրը բովանդակությանը չի համապատասխանում. 9 քառատողանոց չափածոյի առաջին չորս քառատողն ավետարանիչների խորհրդանիշների բացատրություն-պարզաբանումն է, հաջորդ չորսը՝ ըստ ավետարանների հայտնի նախադրությունների, դրանց գրման հանգամանքների վերապատմումը։ Վերջին տունը հիշատակարան է։

«Յամի ծննդեան Տեառն Յիսուսի

Ռա Յի և Ձա (1380) թրվականի

Ես՝ Օգոստինոս Արզրումցի,

Ըզբանս զայս շարադրեցի»¹⁵։

¹⁰ LHS, p. 335.

¹¹ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) «Այլ վայրերի ձեռագրերի մանրաժապավենների հավաքածու», № 1011 (այսուհետև՝ Վենետիկի № 1578)։

¹² Նույն տեղում, էջ Աբ (այս և հետագա բնագրային բոլոր ընդգծումները մերն են—Յ. Վ.)։

¹³ «Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», հ. I. կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 65—101։

¹⁴ Վենետիկի № 1578, էջ 262։

¹⁵ Առանց աղբյուրի հիշատակման Ղ. Ալիշանը տպագրել է այս քառատողը և թվականը սխալմամբ վերծանել Ռա Յի և ՁԱ (տպված՝ ՁԱ—Յ. Վ.) ձեռվ. այսինքն՝ 1381, Մինչդեռ պետք էր վերծանել տառանուններով՝ Ռա Յի և Ձա = ՌՅՁ / 1380 (Ղ. Ալիշան, Սիսական. տեղագրություն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1898, էջ 389, այսուհետև՝ «Սիսական»)։

2. Հաշիւ Զատիկի ճե (140) ամաց (1380—1520)¹⁶:

Ավետիսի զատկական աղյուսակի ՌՇԺ (1510) թվականի սյունակի մի մասը և ՌՇԻ (1520) թվականի սյունակն ամբողջությամբ հետագա կազմման ժամանակ փտրվել ընկել են:

3. [Անուագիտաց]—Պրիդանիա, որ է Անկլիա: Աֆրիքա, որ է Պարպարիա... Գողացիք, որ են Լուսարտք¹⁷:

Այս անվանացանկն Ավետիսը կազմել է Մարտինոսի երկի «Այսոքիկ են ինքնակալք՝ որ և կայսերք, նայ և թագաւորք քրիստոնէայք, որք են յերկրի» հատվածի տասնմեկ աշխարհագրական անուն բացատրելու նպատակով: Կարելի էր այն առանձին երկ չհամարել, եթե այլ ձեռագրերում ընդօրինակված և նկարագրված չլինեիր որպես անհեղինակ գործ¹⁸: Վենետիկի ձեռագրում հետագայում ինչ-որ մեկը շարունակել է Ավետիսի ցանկը. այսպես՝ «Գողօնիկոս» Ալաման: Գարդագինէ՝ Քազգեայք: Ալպան՝ մերձ Հռոմայ: Գադալօն՝ Գարդաճինա: Թեև մեծ մասամբ թյուր այս բացատրությունները մյուս ձեռագրերին չեն անցել, բայց պետք է նկատի ունենալ, որ դրանց հեղինակն Ավետիսը չէ:

4. (Անխոսագիր) «Աղերս բանի յոր կայանԱ ի իսսեալ տառիւք արտաձանԱ... Սապէս նոցին գրեսցին ի լոյՍ»:

Այս 12 տողանոց չափածոն, որի տողերի սկզբնատառերը հոգում են՝ «Աւ-կուստինուս», իսկ վերջնատառերը (կրկնակ տառերով)՝ «Աւետիս» անունը և որը գրանցված է հիշյալ ընտանեկան Աստվածաշնչի 271բ էջում¹⁹ (այլ ձեռագրով հայտնի չէ), մատենագիտական ճշգրտության համար պետք էր թվարկել Ավետիսի երկերի շարքում: Նույն ձեռագրում նրա գրած չորս հիշատակաբանը, բնականաբար, այդ թվարկման մեջ չպետք է մտնեն:

Այսպիսով, հիմնականում վենետիկյան ձեռագրի շնորհիվ, Ավետիս Օգոստին Կարնեցու հայտնի չորս երկին ավելանում են ես չորսը, բայց նրա ստեղծագործությունների քանակի ճշգրտման առումով ուշադրության արժանի է նաև Ղ. Ալիշանի հետևյալ հաղորդումը. «Այս վերջին Լեոնի Վենետիկ եկած տարին (իմա՝ 1381 թ., իրականում՝ 1380 թ.—Յ. Վ.) հոս կու բնակեիր Նդրայր Օգոստինոս ոմն էրզրումցի կրոնավոր, հառաջն Ավետիք կոչված, որ և կընդօրինակեիր զՆախագրությունս Ս. Գրոց, ավելցնելով յուսմէ պեսպես կրոնական բանս աղձակ և ռաւնավոր, և որո գրչագիրն ի ձեռվրնիս է»²⁰:

Նույն ձեռագրին են վերաբերում նաև Բ. Սարգիսյանի հետևյալ տողերը. «Մեր Գրատան հին և նոր Կտակարանաց ձեռագիր հավաքման մը մեջ... Ս. Հերոնիմոսի վերագրված է այս գրվածս և իբր թե թարգմանված է ի լատինե՝ համի Տյառն 1380, ձեռամբ Ֆրա Ավգոստինոսի ի կարգեն Քարոզչաց: Ահավասիկ հիշատակարանը. «Կատարեցան Նախադրութիւնք և Գլուխք բոլոր հին և նոր Կտակարանացն Աստուծոյ ըստ շարակարգութեան երանելոյն Ճերոնիմոսի, և յեղափոխեալ եղև ի յայս (այսինքն ի Հաւաքմունս) ձեռամբ յանցաւոր

¹⁶ Վենետիկի № 1578, էջ 258:

¹⁷ Նույն տեղում, նաև՝ ՄՄ, ձեռ. № 2037, էջ 130ա. 7841, էջ 205բ. 2038, էջ 274բ. Վերջին ձեռագրում բնագիրը ստացել է բովանդակությունը ճշտորեն շարտահայտող «Անուանք քաղաքաց խորագիրը:

¹⁸ ՅՄՄ, Ա, էջ 706:

¹⁹ Պ ա լ յ ա ն, էջ 5:

²⁰ Ղ. Ա լ ի շ ա ն, Հայ-Վենետ կամ հարընչությունք Հայոց և Վենետաց ի ԺԳ—Դ և ի ԺԵ—Զ գարս, Վենետիկ, 1896, էջ 155:

գրչի՝ Ֆրա Ասկոստինոսի ի կարգէ եղբարց Փրէտիքաթորացն, ի քաղաքս Վնէժ, յամի Տեառն ՌԺԶ (1380), ի փետրուար ԺԾ (15)»²¹:

Ձեռագրին վերաբերող այս կցկտուր հաղորդումները լրացվում են Ծ. Փե- չիկյանի մի նամակի հիման վրա Մ. Ուդենրիյնի հրատարակած ոչ մանրամասն նկարագրությամբ. այն ունի 54 թերթ և Հերոնիմոս Ստրիդոնացու հիշյալ նա- խագրությունից բացի պարունակում է նաև Ավետիսի «Վասն տնօրէնութեանն Քրիստոսի ե վասն գալստեան Նեոխնն և կատարածի աշխարհի» երկը²², Բար- թուղիմեոս Մարաղացու «Մեկնութիւն Վեցօրէից» գործից քաղվածքներ և «Կա- նոն և օրհնութիւն երանելոյն Յրանցիսկոսի խոստովանողին ասացեալ նուաստ Յր. Օգոստինոսի Աւետիս կոչեցելոյն ի կարգէ եղբարցն քարոզողաց»²³:

Այս նկարագրությունը ևս էական նորություն չի բերում. օրինակ՝ դժվար է ասել, թե Յրանցիսկոսի կանոնի վերաբերմամբ «ասացեալ... Օգոստինոսի» արտահայտությունն ընդօրինակո՞ւմ պետք է հասկանալ, թե՞ վերաշարադրում: Մյուս կողմից Ղ. Ալիշանի «ավելցնելով յուրմէ պեսպես կրոնական բանս ար- ձակ և ոտանավոր» խոսքը ենթադրել է տալիս, որ Ծ. Փեչիկյանի նկարագրու- թյունը թերի է՝ նշված են միայն հիմնական նյութերը: Իսկ Վենետիկի Մխի- թարյանների մատենադարանի ձեռագրացուցակի տպագրված հատորներում²⁴ ձեռագիրը նկարագրված չէ:

Հուլյս ունենք, որ Մխիթարյանները կհրապարակեն Ավետիսի ձեռագրի (Ղ. Ալիշանը, Բ. Սարգիսյանը և Ծ. Փեչիկյանը համարը չեն նշել) առավել մանրամասն նկարագրություն-ուսումնասիրությունը, որի շնորհիվ հնարավոր կլինի ավելի ևս ընդարձակել Ավետիս Օգոստին Կարնեցու ստեղծագործու- թյունների ցանկը:

Բ. Հովսեփ (Հովասափ) Ապառաւեցի²⁵

Ղ. Ալիշանն իրեն հայտնի աղբյուրների հիման վրա կազմել է Նախիջե- վանի հայ միարարների եպիսկոպոսների և վերախնամողների (գավառահարք՝ միարարների վանք-եկեղեցիների ընդհանուր վերատեսուչ-առաջնորդներ) հա- ջորդության ցանկերը: Գավառահայրերի ցանկի XV դ. հատվածն այսպի- սին է. «1399. Ղուկաս Շահապոնեցի, 1415. Յովսէփ. Շահապոնեցի, 1423— 1442. Յովսէփ, 1471—1475. Մատաթիա Քոնեցի»²⁶:

Հետագայում Մ. Ուդենրիյնը նախ կասկած է հայտնել, որ Հովսեփ Շահա- պոնեցին և մյուս Հովսեփը նույն անձն են²⁷, ապա ավելի հանգամանորեն է ու- սումնասիրել XV դ. վերախնամողներին վերաբերող տեղեկությունները, պար- զել ցանկի անունների և թվականների համար Ղ. Ալիշանի ունեցած աղբյուր-

21 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ», Զ. Ա. հորինեց Զ. Բարսեղ Սարգիսյան, Վենետիկ, 1914, էջ 156 (այսուհետև՝ ՄՅՎ):

22 Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 1025—1026:

23 Հմմտ. LHS, p. 334—335:

24 Տե՛ս ՄՅՎ, Զ. Ա. Վենետիկ, 1914, Զ. Բ. Վենետիկ, 1924, Զ. Գ (Գ. Սարգսյանի հեղի- նակակցությամբ), Վենետիկ, 1966:

25 Այստեղ և հետագայում խոսքը Նախիջևանի գավառի Ապարանի գյուղաքաղաքի մա- սին է:

26 «Սխական», էջ 338:

27 S. A. v. d. Oudenrijn, Eine Armenische Übersetzung der Summa Theo- logica, „Divus Thomas“, 1930 (VIII), p. 267.

ների մեծ մասը և նոր փաստերի շնորհիվ փարատել իր վերոհիշյալ կասկածը²⁸։

Մ. Ուդենրիյնի ուսումնասիրության մեջ մեզ հետաքրքրող երկրորդ Հովսեփին վերաբերող նորություններն են.

1. Նրա պաշտոնավարության Ղ. Ալիշանի նշանակած առաջին տարին՝ 1423 թ., խիստ կասկածելի է և, ըստ այդմ, Մարտինոս V պապի 1423 թ. դեկտեմբերի 12-ի նամակն ուղղված է ոչ թե նրան, այլ՝ Շահապոնեցուն։

2. Եվգենիոս IV պապի 1431 թ. մարտի 11-ի՝ Նախիջևանի եպիսկոպոսին ուղղված նամակում հիշատակված «Joseph de Aparaver» (իմա՝ Aparaner) անունով վարդապետը պետք է լինի այս երկրորդ Հովսեփը, բայց այդ ժամանակ նա դեռևս վերախնամող չպետք է լիներ, որովհետև այդ հանգամանքն ուղղակիորեն շեղված է²⁹։ Այս նույն հիշատակման հիման վրա Մ. Ուդենրիյնը երկրորդ Հովսեփին կասկածանքով անվանում է «Ապարանեցի»։

3. Հովսեփը որպես վերախնամող առաջին անգամ հիշվում է Բողևյան գրադարանի հայերեն «Բ. 1» ձեռագիր ժողովածուի պահպանակի վրա³⁰ դրանցված նրա մի ինքնագիր հիշատակարանի մեջ. «Յանուանն Աստուծոյ, Յամի Տեառն Ռնլէ (1437) Յունիսի ԺԹ (19), ես՝ Ֆրա Յուէփ վարդապետս և վերախնամողս գնեցի զԱրտաքինքս ի մեր հալալ ընչից, ի տէր Յոհանէս եպիսկոպոսէն՝ ԺԱ (11) թ[ահե]կ[անիք], միջնորդութեամբ Ֆրա Գրիգորին և Ֆրա Զուանին ճահկեցոյ, և վկայութեամբ Գր[իգոր]ի վարդապետի և Ֆրա Մխիթարչի և Ֆրա Զունի և Ֆրա ||| և Մկրտիչ և Մանուէլ տղ[ա]ոցն։ Եւ թիւ ամաց մեր[ոց]ն ի սոյն ամի հԹ (49) ամ և Զհանշան թ[ա]գ[աւոր] |||»³¹։

4. Պաշտոնավարության վերջին՝ 1442 թ. Ղ. Ալիշանը պետք է վերցրած լինի Փարիզի Ազգային գրադարանի Suppl. arm. 71 (Մակլերի № 107) ձեռագրի մի հիշատակարանից, ուր 1442 թ. գրագիրը նորոգող Դոմինիկոս Շահապոնեցին³² «պատուական վարդապետ Ֆրա Յովսէփ՝ վերախնամող կարգիս միաբանողացին» խնդրում է հիշել իրեն³³։

Մ. Ուդենրիյնը նույն ուսումնասիրության արդյունքներն անփոփոխ տպագրել է նաև 1960 թ.³⁴։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 2037 ձեռագիրը ևս Հովսեփի ինք-

²⁸ M. A. Oudenburg, General superiors of the United Brethren in Armenta during the XV-th Century («Հանդես ամսօրյա», 1938, էջ 66-78)։

²⁹ Նույն տեղում, էջ 76։ Ե՛վ այս, և՛ Նախորդ կարծիքները՝ մենք չենք բաժանում։ Սիքստոս IV պապի 1475 թ. փետրվարի 4-ի նամակում հիշված Գրիգորը ևս վերախնամող չի կոչվում, բայց եթե նամակի շարադրանքից ելնելով կարելի է նրան վերախնամող համարել, որ և անում է Մ. Ուդենրիյնը («Հանդես ամսօրյա», 1938, էջ 76), ապա, կրկին հենվելով շարադրանքի (Եվգենիոս IV-ի հիշյալ նամակի) վրա, Հովսեփին ևս պետք է վերախնամող համարել (հմտ. «Սիսական», էջ 390)։

³⁰ Այլ ձեռագրերից առանձնացված պահպանակների թվում այդ պատասխիկը կազմում է Բողևյան հայերեն «Բ. 1» ձեռագրի 30-րդ թերթը։

³¹ Մ. Ուդենրիյնը հրատարակել է հիշատակարանի լուսանկարը, վերծանությունը, աշխատել պարզաբանել նրանում հիշատակված անձանց ով լինելը. օրինակ. նա Ֆրա Մխիթարիչին նույնացնում է հայտնի Մխիթար Ապարանեցու հետ և այլն. Բողևյան հայերեն «Բ. 1» ձեռագրի 1ր էջի «ԶՅովսէփ վարդապետս յիշեցէք ի Քրիստոս» հիշատակադրությունը ևս վերաբերում է Հովսեփին։

³² Ղ. Ալիշանը Դոմինիկոս անունը կարդացել է Ղուկաս և փորձել նրան նույնացնել 1399 թ. վերախնամողի հետ («Սիսական», էջ 390)։

³³ «Հանդես ամսօրյա», 1938, էջ 75։

³⁴ LHS, p. 35-36.

նադիրն է՝ գիրը բացարձակ նույնական է վերոհիշյալ Բողեյան պատառիկի գրի հետ. պարունակում է Մարտինոս Օպավիացու ժամանակագրության և Բեգա քահանայի Կայծականաց գրքի լատիներենից կատարված թարգմանությունները, Ահա նրա զխավոր հիշատակարանը³⁵. «Փառք... որ հասոյց զմեղպարտ ոգիս և զփցուն գրիչս՝ զՅրա Յովասաբ Ապարանեցիս ի յաւարտ սորին. զոր և ծրագրեցաք ի Սուրբ Նիկոլ՝ ի Կաֆայ, ի յամի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌնիԱ (1421). յապրիլ ԺԲ (12) եղև աւարտումն սորա, ի յերեսնամեայ կենաց մերոց: Արգ, աղաչեմք, զամենայն հանգիստդ ասմ սուրբ և պատուական և փրկութիւն բազում հոգոց գրոցս, որ կոչի Կայծականաց, յիշեցէք զմեղպարտ ոգիս՝ զՅրա Յովասաբս և զծնողսն իմ՝ զՔարիմշայ և զԿատարինայ. և Աստուած զձեզ յիշէ յիւր անմահ տեսութիւնն և յարքալութիւնն, նայ և զվարպետսն իմ զառաջին և զերկրորդ՝ զՅրա Օգոստինոս ե զՄիխիթարիչ ||| և զբաբունին յիշեցէք ի Քրիստոս»³⁶:

Ճեռագիրը Հովսեփինը համարելու համար նրա և Բողեյան պատառիկի գրերի նույնականությունը հուսալի կռվան է, բայց դա հաստատվում է նաև մի այլ հիշատակարանով, որը չի տպագրվել ԺՆ դ. հիշատակարանների շարքում. «Ձսակաւ բանիս աշխատողս և զփցուն գրիչս՝ զՅրա Յովսէփս Ապարանեցի յիշեցէք ի Քրիստոս Աստուածն մեր և դուք յիշեալ լիջիք ի Տեառն»³⁷:

Այժմ առավել քան պարզ է, որ նախ՝ Բողեյան պատառիկից բացի, Հովսեփի ինքնագիրն է նաև 187 մեծադիր և խիտ գրչութուն ունեցող ՄՄ Ձ 2037 ձեռագիրը, երկրորդ՝ «Յովասաբ» ձեռը Հովսեփի անվան մի այլ տարբերակն է: Իսկ Հովասափ Ապարանեցու և միաբանողների 1423—1442 թթ. վերախնամող Հովսեփի նույնության պարագայի շնորհիվ վերանում է նրա «Ապարանեցի» մականվան կողքին Ուղեներինի նշանակած հարցականը. Հովսեփ վերախնամողի հոր անունը Քարիմշա էր, մորը՝ Կատարինա: Եթե ըստ Բողեյան պատառիկի, 1437 թ. հունիսի 19-ին նա 49 տարեկան էր (ըստ այդմ՝ ծնված 1388 թ.), ապա ըստ մեր ձեռագրի, 1421 թ. ապրիլի 12-ին՝ 30 տարեկան (հետեաբար՝ ծնված 1391 թ.): Գուցե նախընտրելին վերջին թվակա՞նն է:

Հայտնի է, որ Կաֆայի Ս. Հակոբ, Ս. Նիկողայոս և Ս. Պետրոս-Պողոս վանք-եկեղեցիներն ձրնդ իշխանութեամբ գաւառահօրն Հայոց էին... ուր ապաստանէին նեղեալքն ի հարստահարութեանց ի Հայս, և գաւառահայրն գայր ի գաւառէ Նախճաւանի քննել զվաներն Կաֆայի»³⁸: Գավառահայրերի այս իրավունքը Բռնիփակիոս IX պապի 1399 թ. ապրիլի 28-ի կոնդակով վերապահվում է ղոմինիկյանների քնդհանուր կարգապետին (Magister Generalis) կամ նրա փոխանորդին: Այդ կոնդակի պատճենը միաբանողները ստացել են միայն 1423 թ. հոկտեմբերի 13-ին³⁹: Հետեաբար, կարելի է մտածել, որ Հովսեփ Ապարանեցին 1421 թ. արդեն վերախնամող էր և Կաֆա էր գնացել իր տեսչական պարտականությունները կատարելու:

35 «ԺԵ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1401—1450 թթ.), Կաղմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 269—270:

36 ՄՄ, ձեռ. Ձ 2037, էջ 187ա: Ե՛ Սուրբ Նիկոլ՝ ի Կաֆայս հատվածը գրված է տողամիջում, բայց՝ նույն ձեռքով: Հիշատակարանը վերջանում է երկու ժամանակագրական գրանցմամբ («Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հ. I, էջ 192 և 194»), բայց գրանք մեր խնդրին չեն վերաբերում:

37 Նույն տեղում, էջ 152ա:

38 «Սխական», էջ 389:

39 Նույն տեղում, էջ 390:

Այժմ՝ Հովսեփի ուսուցիչների մասին. առաջինը՝ Ֆրա Օգոստինոսը. Մ. Ուղենրիյնի կարծիքով Ավետիս Օգոստինն է⁴⁰: Դա, իրոք, հնարավոր է, եթե ընդունենք, որ 1383 թ. հետո Ավետիսը Եվրոպայից կտրող էր վերադարձած լինել Կաֆա, կամ՝ գնացած Նախիջևանի գավառ, որտեղ և Հովսեփը պետք է նրան աշակերտեր 1400-ական թվականներին (երր ուսուցիչը 68—70 տարեկան էր, աշակերտը՝ 9—12): Երկրորդ ուսուցիչ Ֆրա Մխիթարի, անկասկած, նշանավոր Մխիթար Ապարանեցին էր, որի գործունեությունն ավելի զգալի է եղել հենց 1410-ական թվականներին⁴¹. Հովսեփին նա պետք է ուսուցաներ Օգոստինի մահից հետո:

Այսպիսով, Նախիջևանի միարարների Հովսեփ Ապարանեցի վերախրեանողի մասին այժմ հայտնի է հետևյալը. Քարիմշահ հորից և Կատարինի մորից Ապարաներ գյուղաքաղաքում ծնվել է 1388 կամ 1391 թվականներին, 1400-ական թվականներին նա աշակերտել է Օգոստինոս անունով մեկին, որը, գուցե, Ավետիս Օգոստինն է, ապա՝ Մխիթար Ապարանեցուն. 1421 թ. Կաֆայի Ս. Նիկողայոս եկեղեցում ընդօրինակել է ՄՄ № 2037 ձեռագիրը, 1437 թ. Նախիջևանի Հովհաննես եպիսկոպոսից գնել է այժմյան Բողեյան հայերեն «Բ. 1» ձեռագիրը. 1442 թ. նրա հրամանով Դոմինիկոս Շահապոնեցին նորոգել է Փարիզի Suppl. arm. 71 (Մակերի ցուցակի № 107) ձեռագիրը: Նրան է ուղղված Մարտինոս V պապի 1423 թ. դեկտեմբերի 12-ի նամակը: 1423 թ., գուցե և 1421 թ., եղել է վերախրեանող: 1442 թ. նրա պաշտոնավարության վերջին տարին չէր կարող լինել:

НОВЫЕ СВЕДЕНИЯ О ДВУХ АРМЯНСКИХ УНИАТАХ

ЮРИЙ ВАРДАНИЯ

Резюме

I. *Аветис Августин Карнеци*—церковно-общественный деятель, родился в Карине в 1332 г. Со второй половины 40-ых годов XIV в. жил и творил в Феодосии (Кафа), Пизе, Константинополе, Венеции. В 1363 г. вступил в доминиканский орден. По сей день были известны четыре его произведения, ныне найдены еще четыре, которые имеют значительную познавательную ценность. В библиотеке армянской конгрегации Мхитаристов в Венеции хранится рукопись-автограф Аветиса, на основе которой в дальнейшем, вероятно, можно будет выявить его неизвестные труды.

II. *Овсеп (он же Овасан) Апаранерци*—родился в 1388 г. или в 1391 г., в 1423—1442 гг. был главным настоятелем монастырей армянских униатов области Нахичеван. В 1400-ых гг. был учеником некоего Августина (может быть, Аветиса Августина), затем учился у знаменитого униата Мхитара Апаранерци. Овсеп сыграл заметную роль в деле ознакомления научных кругов коренной Армении с «Хроникой света» Мартина Оплавского (авторитетнейшего европейского историографа XIII века).

⁴⁰ «Հանդես ամսորիա», 1948, էջ 595:

⁴¹ Դ. Ալիշան, Հայապատում, պատմիչը և պատմութիւնը Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1901, էջ 123. Դսմտ. «Մխական», էջ 390: